# Ո՞վ է Բենիամին թագավորը:

Բենիամին թագավորը Աստծո մի մարգարե էր և մի արդար թագավոր: Նա հավաքեց իր ժողովրդին՝ նրանց ուսուցանելու համար: Նա կանգնեց աշտարակի վրա, որպեսզի ավելի շատ մարդիկ կարողանային լսել իրեն: Ժողովուրդը վրաններ կանգնեցրեց աշտարակի շուրջ՝ լսելու համար: Դա նման էր գերագույն համաժողովի:

Բենիամին թագավորն ուսուցանեց, որ Երկրի վրա կծնվի Հիսուս Քրիստոսը: Հիսուսը հրաշքներ կգործի: Նա կտանջվի և կմահանա բոլոր մարդկանց մեղքերի համար: Այնուհետև Նա հարություն կառնի, որպեսզի մենք բոլորս կրկին ապրենք:

Բենիամին թագավորը հրավիրեց ժողովրդին իրենց վրա վերցնել Քրիստոսի անունը: Դա նշանակում է Աստծուն հետևելու և Նրա պատվիրանները պահելու ուխտ կամ խոստում կապել:

Այսօր մենք ցույց ենք տալիս, որ մենք հոժար ենք մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը, երբ մենք մկրտվում ենք:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆԿԱՐԱԳՐԵՐԸ՝ ՍԻՄԻՆ ԲԼԱԹԻՆ

## Սուրբ գրությունների մարտահրավեր

Թագավոր Բենիամինին ժողովուրդը լսելուց հետո, ո՞ւմ հետ նրանք ուխտ կապեցին (Մոսիա 5.5):

Ի՞նչ ասաց Աբինադին Նոյ թագավորին որ պետք է աներ փրկվելու համար (Մոսիա 12.33):

Երբ Ալման ու Էլամը դուրս եկան ջրից, նրանք ինչո՞վ էին լցված (Մոսիա 18.14):

## Ես կարողանում եմ կարդալ Մորմոնի Գիրքը

Կարդալուց հետո գունավորեք նկարի մի մասը: Դուք կարող եք կարդալ այս սուրբ գրությունները, որոնք ուղեկցվում են *Եկ, հետևիր ինձ* ձեռնարկի յուրաքանչյուր շաբաթվա ընթերցանության հետ:

Շաբաթ 1. Մոսիա 4.9

Շաբաթ 2. Մոսիա 7.19

Շաբաթ 3. Մոսիա 16.9

Շաբաթ 4. Մոսիա 18.8–10



Ստեղծեք մի բան, որը ձեզ հիշեցնում է այն, ինչ ուսուցանել են Տիրոջ մարգարեները: Կիսվեք մեզ հետ ձեր պատրաստածով: